ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» հունիսի 2014 թվականի N 78– Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-Ի N 36-Ա ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԿԵՏԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 75-րդ հոդվածով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 16-ի «Գյումրու մոր և մանկան Ավստրիական հիվանդանոց փակ բաժնետիրական ընկերության սեփականությունը հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոց N 5/13 հասցեով 0,61726 (զրո ամբողջ վաթսունմեկ հազար յոթ հարյուր քսանվեց հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասի նվիրատվությունը Գյումրու համայնքի կողմից ընդունելու, նույն հողամասը և Գյումրու համայնքի սեփականությունը հանդիսացող Գարեգին Նժդեհի փողոց N 3/7 հասցեով 0,35342 (զրո ամբողջ երեսունհինգ հազար երեք հարյուր քառասուներկու հարյուրհազարերորդական) հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին» N 36-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերը:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (16) **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան _____

Գ. Ադամյան _____

Ա.Բաղրամյան _____

Լ.Բարսեղյան _____

Մ.Գաբոյան _____

Ա.Գրիգորյան _____

Վ.Եդիգարյան _____

Հ.Խաչատրյան _____

Հ. Կարապետյան _____

Տ.Հովհաննիսյան _____

Ն. Մեսրոպյան _____

Ռ.Մխիթարյան _____

Վ.Շիրինյան _____

Ե. Պողոսյան _____

Մ.Սահակյան _____

Տ. Փանոսյան _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

ք.Գյումրի
«12» հունիսի 2014 թ.